



# Թոքերի հիվանդությունը և սեղանաձածկերը Ինչ պետք է իմանաք սիլիկոզի մասին

## Ինչպես են արհեստական քարից սեղանաձածկերն (countertops) առաջացնում սիլիկոզ

Այս ապրանքները մեծ պահանջարկ ունեն իրենց դիմացկունության և մատչելիության շնորհիվ: Սակայն արհեստական քարե սալիկներ կտրող, տաշող, ծակող կամ հղկող աշխատողները կարող են կլանել մեծ քանակությամբ սիլիցիումի փոշի, եթե շփումը նվազեցնելու համար չօգտագործեն համապատասխան պաշտպանիչ շնչադիմակներ և չկիրառեն անվտանգության պահանջվող կանոնակարգեր:


Աշխատանքային անվտանգ գործելակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [worksafelywithsilica.org](https://worksafelywithsilica.org) կայք:

## Սիլիկոզը կանխարգելվող է ԴՈՒՔ ԿԱՐՈ՛Ղ ԵՔ ՕԳՆԵԼ

- Օգնեք բարձրացնել իրազեկությունը՝ այս տեղեկատվությունը փոխանցելով ձեր ընտանիքին և ընկերներին: Այցելեք ստորև նշված կայքերը՝ սիլիկոզի և սիլիցիումի հետ անվտանգ աշխատելու մեթոդների մասին ավելին իմանալու համար:
- Ձեր վերանորոգման աշխատանքների ղեկավարին հարցրեք քիչ սիլիցիում պարունակող այլ տարբերակների մասին: Հարցրեք նաև, թե անվտանգության ինչ միջոցներ են կիրառում արհեստական քարի հետ աշխատելիս և ինչպես են պաշտպանում արտադրողներին սիլիցիումի փոշու հետ շփումից:



<http://publichealth.lacounty.gov/silicosis/>



<https://worksafelywithsilica.org/>




Արհեստական քարից սեղանաձածկերի (countertops) փոշին կարող է աշխատողների մոտ առաջացնել թոքերի հիվանդություն:

# Սիլիկոզ

## Ի՞նչ է սիլիկոզը

- Աշխատանքի հետ կապված թոքերի հիվանդություն
- Առաջանում է սիլիցիումի փոշի շնչելուց
- Ախտանիշներ՝ հազ, հոգևածություն, շնչելու դժվարություն
- Անբուժելի է և կարող է առաջացնել մահ
- Կարող է անհրաժեշտ լինել թոքերի փոխպատվաստում
- Ախտանիշների առաջացման համար կարող է պահանջվել միջինում 10-20 տարի
- Լիովին կանխարգելվող է




**«Սիլիկոզը մահվան դատավճիռ է: Նախկինում առողջ մարդիկ խեղդվում են լիովին կանխարգելիչ հիվանդությունից՝ հաճախ իրենց հետևից թողնելով ընտանիք ու երեխաներ»:**

- Ջեյն Ֆագիո, Բժշկ. գիտ. դոկտոր (MD), թոքաբան և վերակենդանացման բաժնի բժիշկ, ով 2019 թվականից բուժել է սիլիկոզով տառապող մոտ 100 հիվանդի:

# Սիլիցիումի քանակը բնական և արհեստական քարերում

Բոլոր բնական քարերը պարունակում են սիլիցիում: Մարմարի և գրանիտի նման քարերը կարելի է համարել ավելի անվտանգ տարբերակներ, քանի որ դրանք ավելի քիչ սիլիցիում են պարունակում:

Արհեստական քարը հիմնականում պատրաստվում է քվարցից, որը բնական վիճակում պարունակում է մեծ քանակությամբ սիլիցիում: Երբ արհեստական քարե սալիկներ պատրաստելու համար դրանք մանրացվում և խառնվում են պոլիմերային խեղճերի և ներկանյութերի հետ, կարող են պարունակել մինչև 95% սիլիցիում:



\*Այս տոկոսները մոտավոր են հաշվարկված. խնդրում ենք ստուգել ապրանքի անվտանգության տվյալների թերթիկը՝ պարունակվող սիլիցիումի մասին տեղեկությունների և անվտանգ օգտագործման ցուցումների համար:

# Ինչո՞ւ է կարևոր ձեզ համար

Շատերը գուցե չգիտեն, որ արհեստական քարը, որը խոհանոցի կահույքի մակերեսների (սեղանածածկերի) վերանորոգման համար տարածված տարբերակ է, նպաստում է սեղանածածկեր կտրող և պատրաստող աշխատողների մոտ լուրջ առողջական խնդրի առաջացմանը: Այս աշխատողներից շատերի մոտ ախտորոշվել է սիլիկոզ՝ թոքերի անբուժելի, բայց կանխարգելիչ հիվանդություն:

Դուք կարող եք կատարել փաստերի վրա հիմնված ընտրություն՝ խրախուսելով վերանորոգման աշխատանքների ղեկավարներին և սեղանածածկեր արտադրողներին օգտագործել անվտանգ մեթոդներ և ընտրելով քիչ սիլիցիում պարունակող սեղանածածկեր:

**Խնդրում ենք նկատի ունենալ, որ տեղադրվելուց հետո ապրանքը սպառողների համար առողջական որևէ հայտնի վտանգ չի ներկայացնում:**

